



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիոյան

« 23 » 05 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0095-23

Ձեռնարկողը՝

«Դեմեր» ՍՊԸ

Կոտայքի մարզ, Արամուս բնակավայր, Տիգրանաձորի խճղ. 122

Գործունեությունը՝ Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի
Դեմեր-2, Դեմեր-3, Դեմեր-4 տեղամասերում
օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով
երկրաբանական ուսումնասիրության շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № **0095-23**

< 23 > 05 2023թ.

Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի Դեմեր-2, Դեմեր-3, Դեմեր-4 տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«Դեմեր» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
/Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Կոտայքի մարզ, Արովյան
համայնքի Արամուս բնակավայր

Ներածական մաս. Հայցվող 18.52հա մակերեսով տարածքը վարչական տեսանկյունից գտնվում է Կոտայքի մարզի, Արովյան խոշորացված համայնքի Արամուս բնակավայրի վարչական տարածքում:

Տեղամասերի մոտակա բնակավայրերն են՝ Արամուս, Կամարիս, Գեղաշեն, Չովք, Ձորաղբյուր և Կաթնաղբյուր գյուղերը, որոնց հետ տեղամասերը կապված են բարենպաստ հողածածկ և ասֆալտապատ ավտոճանապարհներով:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը կադաստրային քարտեզներում հաշվառված է որպես համայնքային, գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր՝ արոտավայրեր և այլ հողատեսքեր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Հետախուզվող տեղամասերի ծայրակետային կոորդինատներն են՝ ARM WGS-84 կոորդինային համակարգով.

2-րդ տեղամաս

X1 - 4455804.80	Y1 - 8472671.20
X2 - 4455805.23	Y2 - 8472669.92
X3 - 4455912.28	Y3 - 8472717.15
X4 - 4455911.17	Y4 - 8472781.43
X5 - 4455868.46	Y5 - 8472984.13
X6 - 4455733.02	Y6 - 8472872.33



X7 - 4455803.00	Y7 - 8472836.00
3-րդ տեղամաս	
X1 - 4455864.30	Y1 - 8471878.10
X2 - 4455866.11	Y2 - 8471856.73
X3 - 4455907.87	Y3 - 8471820.14
X4 - 4455944.39	Y4 - 8471754.57
X5 - 4456029.79	Y5 - 8471784.30
X6 - 4456111.06	Y6 - 8471672.05
X7 - 4456090.41	Y7 - 8471646.12
X8 - 4456122.31	Y8 - 8471640.46
X9 - 4456306.07	Y9 - 8471664.21
X10 - 4456260.72	Y10 - 8472110.91
X11 - 4456206.94	Y11 - 8472304.01
X12 - 4456205.34	Y12 - 8472304.10
X13 - 4456193.72	Y13 - 8472081.94
X14 - 4456050.33	Y14 - 8472073.67
X15 - 4455990.81	Y15 - 8472047.63
X16 - 4455962.99	Y16 - 8472072.98
X17 - 4456000.00	Y17 - 8472126.31
X18 - 4455992.29	Y18 - 8472166.87
X19 - 4455961.63	Y19 - 8472168.70
X20 - 4455936.05	Y20 - 8472179.11
X21 - 4455914.92	Y21 - 8471986.77
X22 - 4456009.24	Y22 - 8471938.82
X23 - 4455976.78	Y23 - 8471866.38
X24 - 4455922.14	Y24 - 8471863.77
X25 - 4455886.33	Y25 - 8471875.36
X26 - 4455884.94	Y26 - 8471873.49

4-րդ տեղամաս

X1 - 4455751.68	Y1 - 8470831.27
X2 - 4455754.24	Y2 - 8470834.10
X3 - 4455815.58	Y3 - 8470767.09
X4 - 4455687.26	Y4 - 8470549.18
X5 - 4455531.13	Y5 - 8470799.06
X6 - 4455591.03	Y6 - 8470835.96
X7 - 4455656.83	Y7 - 8470754.11

Բազալտների որակական հատկանիշները պետք է համապատասխանեն «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից 100-95, «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 և Ավագ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ՀՍ ԴՕՏ-երի պահանջներին, իսկ ճառագայթահիգիենիկ հատկություններով պետք է համապատասխանի HPB-96 նորմատիվային փաստաթղթի պահանջներին:



Նախագծով Նախատեսվում է հորատել 25 հորատանցք, որի համար 25 անգամ կկատարվի POLE-HOLE DIGGER ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Տեղամասերի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 312.0գծ.մ ծավալով հորատանցքեր, այդ թվում՝

Դեմեր 2 տեղամասում 5 հորատանցք՝ 82.0գծ.մ ընդհանուր ծավալով,

Դեմեր 3 տեղամասում 13 հորատանցք՝ 163.0գծ.մ ընդհանուր ծավալով,

Դեմեր 4 տեղամասում 7 հորատանցք 87.0գծ.մ ծավալով:

Հորատանցքերի խորությունն ընդունվում է 10-20մ: Հորատումը կատարվելու է POLE-HOLE DIGGER հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով, 103մմ նախնական և 93մմ վերջնական տրամագծով: Օգտակար հանածոյի հորատահանուկի գծային ելքը պետք է կազմի 85-90%:

Նախատեսվում է անցնել 6 հետախուզահոր Դեմեր 3 տեղամասում, յուրաքանչյուրը 5.0մ խորությամբ: Մեկ հետախուզահորի մակերեսը կկազմի 6մ², ընդհանուր մակերեսը կկազմի 36մ²:

Հետախուզահորերի ծավալը կկազմի՝ 30.0գծ.մ, կամ 180մ³, այդ թվում հողաբուսական շերտ՝ 6.12մ³ (տեղամասում հողաբուսական շերտի հզորությունը տատանվում է 0.10-0.25մ սահմաններում, միջինը 0.17մ):

Դեմեր 2-րդ և Դեմեր 3-րդ տեղամասերում նախատեսվում է մերկացումների փաստագրման աշխատանքներ, ընդհանուրը 32գծ.մ ծավալով, այդ թվում 1 մերկացում 2-րդ տեղամասում 5 գծ.մ ծավալով և 5 մերկացում 3-րդ տեղամասում՝ 27գծ.մ ծավալով:

Նախատեսվում է կատարել փորձնական արդյունահանում բազալտների զանվածից բլոկների ելքի տոկոսը որոշելու համար:

Նախատեսվում է յուրաքանչյուր տեղամասում անցնել 96մ³ փորձնական բացահանք: Յուրաքանչյուր բացահանքի մակերեսը կկազմի՝ 24մ², բարձրությունը 4.0մ :

Ընդամենը նախատեսվում է անցնել 3 բացահանք, 72մ² ընդհանուր մակերեսով, 288մ³ (այդ թվում 167.04մ³-ը թարմ բազալտներում և 107.04մ³-ը ճեղքավորված ու հողմահարված բազալտներում) ծավալով, որից 13.92մ³-ը հողաբուսական շերտն է, այդ թվում՝ Դեմեր 2 տեղամասում 4.32մ³, Դեմեր 3 տեղամասում 4.08մ³ և Դեմեր 4 տեղամասում 5.52մ³:

Բացահանքի անցման ժամանակ հողաբուսական շերտը և փուշտան կիեռացվեն առանձին և կկուտակվեն բացահանքի անմիջական հարևանությամբ, հետագայում կօգտագործվեն ռեկուլտիվացիոն աշխատանքների համար:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները՝ հորատանցքերը, փորձնական բացահանքը և բնական մերկացումները:

Կատարվելու է մերկացված ապարների ուսումնասիրություն, նմուշների վերցնում, դրանց պիտակավորում, հորատանցքերի նկարագրում՝ նմուշարկման միջակայքերի նշմամբ:

Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով:

Այդ աշխատանքների ծավալներն են.

- հորատահանուկի փաստագրում - 332 գծ.մ
- մերկացումների փաստագրում - 32գծ.մ
- փորձնական բացահանքի փաստագրում- 12.0գծ.մ
- Ընդամենը - 376գծ.մ:



Տեղամասերի բազալտների որակական հատկանիշները պարզաբանելու նպատակով նախատեսվում է հորատանցքերից, հետախուզահորերից, փորձնական բացահանքից, մերկացումներից կատարել նմուշարկում:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատանցքերից նմուշարկել անընդհատ տիրույթներով նմուշներ, որոնց սեկցիաների երկարությունն ընդունվում է 5մ, հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 60 նմուշ.

- մենաքարերի վերցնում փորձնական բացահանքից 3 նմուշ,

- մենաքարերի վերցնում հետախուզահորերից՝ 6 նմուշ,

- մենաքարերի վերցնում մերկացումներից՝ 6 նմուշ,

- համախառը նմուշի վերցնում՝ 3 նմուշ,

- քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 3 նմուշ և քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով 3 նմուշ:

Ընդհանուր առմամբ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար նախատեսվում է վերցնել 75 նմուշ, այդ թվում 60 հանուկային և 15 մենաքարային նմուշ, 3 համախառը նմուշներ, որոնք կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում: Բազալտների քիմիական կազմի որոշման նպատակով նախատեսվում է վերցնել 3 նմուշ, յուրաքանչյուր տեղամասից 1 նմուշ:

Հորատումից ստացված ամբողջ հորատահանուկը ենթարկվում է նմուշարկման: Նմուշարկումը սեկցիոն է: Հորատահանուկի միջին տրամագիծը 76մմ է:

Կնմուշարկվեն հորատման ամբողջ ծավալի 90%-ը արմատական ապարներում:

Հորատման ամբողջ ծավալը 5մ նմուշի միջին երկարության դեպքում կկազմի՝

$298.8 \text{ գծ.մ նմուշ}, 298.8:5\text{մ}= 60 \text{ նմուշ}, \text{այդ թվում՝}$

- Դեմեր 2 տեղամասում $82 \times 90\% = 73.8 \text{ գծ.մ նմուշ}, 73.8:5\text{մ}= 15 \text{ նմուշ},$

- Դեմեր 3 տեղամասում $163 \times 90\% = 146.7 \text{ գծ.մ նմուշ}, 146.7:5\text{մ}= 29 \text{ նմուշ},$

- Դեմեր 4 տեղամասում $87 \times 90\% = 78.3 \text{ գծ.մ նմուշ}, 78.3:5\text{մ}= 16 \text{ նմուշ},$

Մերկացումներից, փորձնական բացահանքից և հետախուզահորերից նախատեսվում է (20x20x20սմ) չափի 15 մոնոլիտ նմուշների վերցնում՝ այդ թվում 6-ը հետախուզահորերից, 3-ը բացահանքերից, 6-ը մերկացումներից:

Տեղամասերի խիստ հողմահարված, ճեղքավորված բազալտները որպես խճի հումք պարզելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր տեղամասից համախառն նմուշի վերցնում, Յուրաքանչյուր տեղամասից կվերցնվի 1-ական նմուշ՝ յուրաքանչյուրը 150կգ քաշով, ընդհանուրը 450կգ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացում վերցված բոլոր նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների:

Նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական քիմիական, պետրոգրաֆիկական ուսումնասիրություններ:

Վերցրած 78 նմուշները (60 հանուկային, 15 մենաքարային և 3 համախառը) «Անալիտիկ» ՍՊ ընկերության լաբորատորիայում կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների:

Ուսումնասիրվող տեղամասում նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ երևակման տարածքի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանելու համար:



Անցած լեռնային փորվածքները, հանուկը պետք է ենթարկվեն ռադիոմետրական չափումների, ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար СРП-6801 ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

Նախատեսվում է 25 հորատման հրապարակների և դրանց մոտեցման ճանապարհների նորոգում /անհրաժեշտության դեպքում/ մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում:

Այդ աշխատանքների ծավալները ստորաբաժանվում են՝

- Հորատման հրապարակների կառուցում:

Կկառուցվի 25 հորատման հրապարակ, յուրաքանչյուրը 32.5մ² մակերեսով: Ընդհանուր մակերեսը կկազմի՝ 812.5մ², այդ թվում 2-րդ տեղամասում 162.5մ², 3-րդ տեղամասում 422.5մ² և 4-րդ տեղամասում՝ 227.5մ²:

Ծրագրով նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում կան գործող հանքավայրեր և առկա են դեպի հանքերը տանող գրունտային ճանապարհներ, որոնք բարենպաստ են և ընկերությունը կօգտվի այդ ճանապարհներից:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասերի տարածքում մակերևութային և գրունտային ջրերը բացակայում են:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆթի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է տարածքի մակերեսից և հողաբուսաշերտը վերականգնվում է՝ 2-րդ տեղամասում 0.18մ, 3-րդ տեղամասում 0.17մ և 4-րդ տեղամասում 0.23մ խորության վրա: Ռեկուլտիվացիայի ընդհանուր ծավալը կկազմի 99.81մ³: Աշխատանքները կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 460250 հազ. դրամ:

Ըստ նախնական գնահատման հայտի, անմիջապես երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ, ինչպես նաև դրանց աճելավայրեր, կամ ապրելավայրեր չեն արձանագրվել: Հայցվող տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքում, ինչպես նաև բնության հուշարձաններ հաշվառված չեն:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 550.0հազ.դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Նավթամթերքների պահեստավորում հատուկ տակառներում՝ բացօթյա մեկուսացված բետոնապատ հարթակների վրա, որին տրվում է համապատասխան թեքություն դեպի հավաքող բետոնապատ փոսը:

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ 60լ տարողությամբ և հետագա տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

- Փոշենստեցման նպատակով աշխատանքների ընթացքում նախատեսվում է ջրցանում հորատման հարթակների, հետախուզահորերի և փորձնական բացահանքերի սահմաններում:



- Հորատումը կկատարվի հատուկ լուծույթների կիրառմամբ՝ փոշեգոյացումը նվազեցնելու/կրճատելու համար:

- Կեղտաջրերի հավաքում հորատի պ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով, դատարկված փոսը նախատեսվում է լցնել քարերով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ՍՊ ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ:

- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

- Բուսական և կենդանական աշխարհի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

Աղմուկի մակարդակի վերահսկողություն Արամուս բնակավայրի մոտ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Կոտայքի մարզի Արամուս բնակավայրում անցկացված հանրային քննարկումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ներքին գործերի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել, կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ



հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Դեմեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի Դեմեր-2, Դեմեր-3, Դեմեր-4 տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Հովիկ Մեսրոպյան